



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«11» 07 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000054

Ձեռնարկողը՝

«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ

Ք. Երևան, Նար-Դոսի 3 նրբ. 3ա տուն

Գործունեությունը՝

Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ փեղամասի
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկշիռություն
Կողմաքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000054

«11» 07 2019թ.

Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման աշխարանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝ <<ԼԵՎՈՒՇ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզի Արամուս համայնք

Կամարիսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում:

Առաջին տեղամասը տեղադրված է Կամարիս գյուղից 1.5կմ հարավ, երկրորդ տեղամասը՝ նույն գյուղից 3.6կմ հարավ-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են Մայակովսկի՝ 2,4կմ, Ձորաղբյուր՝ 2,3կմ, Արամուս՝ 2,55կմ, Աբովյան քաղաքը 10կմ հեռավորության վրա:

Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասի պաշարները A+B+C1 կարգերով 2739 835մ³ քանակով հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի 29.06.1982թ. թիվ 260 որոշումով՝ ԳՈՍՍ 1102-79 ստանդարտներին համապատասխան շինաքար ստանալու, իսկ դրանց արդյունքում առաջացող թափոնները շինարարական խճի (ՀՍՍ ԳՈՍՍ 8267-95) արտադրության համար:

Նախագծվող բացահանքի 3.9հա տարածքի եզրագծում ներփակված հաշվեկշռային պաշարների ծավալը կազմում է 295 625մ³ բազալտի զանգված և 90000մ³ մակաբացման ապարներ:

Եզրագծում արդյունաբերական պաշարների ծավալը՝ բնամասերում թողնված 20625մ³ կորուստների դեպքում կազմում է 275 000մ³ բազալտի զանգված /կամ 52250մ³ շինաքար/:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 12960մ³ մարվող և 11000մ³ արդյունահանվող բազալտի զանգված:



Հանքավայրի տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով՝

1. X=4454746 Y=8470181, 2. X=4454736 Y=8470409,
3. X=4454526 Y=8470438, 4. X=4454530 Y=8470279:

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական, լեռնատեխնիկական պայմաններից օգտակար հանածոյի շերտի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծված բացահանքը ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը– 210մ;
- ամենամեծ լայնությունը– 190մ;
- ամենամեծ խորությունը – 30մ:
- բացահանքի օտարման տարածքը–3,9հա;

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 25 տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է մոտ 12960մ³ մարվող պաշար:

Լեռնակապիտալ աշխատանքներից նախատեսվում է բացող խրամի անցում, արդյունաբերական և շրջադարձային հրապարակի կառուցում, աշխատանքային սկզբնական ճակատի նախապատրաստում:

Հանքային դաշտի շահագործման ընթացքում հաշվարկված են հետևյալ կորուստները՝ ընդհանուր բացահանքային կորուստներ, որոնք կազմում են՝ 7.5%, շահագործական կորուստներ, որոնք ընդունված են 0.5%-ի չափով:

Բացահանքի բացումը մինչև 1545մ նիշով սահմանագիծն իրականացվելու է հանքադաշտի մակերևույթով տեղադրված մեկ ընդհանուր խրամով, իսկ սահմանագծից ցած՝ մինչև 1535մ նիշը՝ մեկ ընդհանուր ներքին տեղադրման թեք խրամի միջոցով:

Հանքի շինարարության ընթացքում կատարվելու են հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- բացող խրամի անցկացում 1500մ երկարությամբ և 500մ³ ծավալով,
- արդյունաբերական հրապարակի կառուցում 450մ² մակերեսով և 400մ³ ծավալով,
- շրջադարձային հրապարակի կառուցում 700մ² մակերեսով և 400մ³ ծավալով,
- աշխատանքային սկզբնական ճակատի նախապատրաստում 5000մ³ ծավալով /այդ թվում բազալտ 500մ³/:

Լեռնային աշխատանքների կատարումը փխրուն /թույլ/ ապարներում իրականացվում է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ կոմպլեքսի միջոցով:

Միաքարի անջատումը զանգվածից նախատեսվում է կատարել հորատասեսային աշխատանքներով: Հորատասեսային աշխատանքների կիրառման ժամանակ նախատեսվում է հիդրոսեսայերի տեղադրում պայթանցքերի մեջ և զանգվածի ճեղքում հիդրավլիկ ճնշմամբ:

Բազալտների արդյունահանումից և մակաբացման ապարներից առաջացած թափոնների բարձումը և տեղափոխումը դեպի օբյեկտներ և լցակույտ կատարվում է ՅՕ-



5122 էքսկավատորի և KpA3-2565 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով, ընդ որում մակաբացման ապարները 14մ³ ծավալով տեղափոխվում են լցակույտեր, իսկ թափոնները 34մ³ հերթափոխ/ծավալով տեղափոխվում են վերամշակման՝ գոյություն ունեցող ՋՏԿ, որը գտնվում է 700մ հեռավորության վրա:

Բացահանքի մակաբացման շերտի ապարները ներկայացված են ժամանակակից առաջացումներով և բազալտների բեկորներով: Մակաբացման ապարները տեղափոխվելու և փոխվելու են մոտ 200մ-ի վրա գտնվող դեռևս խորհրդային տարիներին արդյունահանված բացահանքի տարածք, միաժամանակ իրականացնելով այդ տարածքի վերականգնում: Արդյունահանման քսաներորդ տարվանից սկսած դատարկ ապարները փոխվելու են 1550մ և 1545մ նիշ ունեցող՝ ամբողջ հզորությամբ արդյունահանված հորիզոնների հատակին, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ իրականացնելով խախտված տարածքների վերականգնում:

Բացահանքի լրիվ մշակումից հետո հարթեցվելու և ռեկուլտիվացվելու են լցակույտի մակերևույթը, բացահանքի ներքևի /հատակի/ հորիզոնները, մուտքային ճանապարհը, դեպի լցակույտ տանող ճանապարհը, արտադրական հրապարակը՝ ընդամենը 3.1 հա չափով:

Բացահանքի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումն իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն 1044.5 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում գումարային ազդեցություններ չեն առաջանում, քանի որ հանքավայրի հարակից տարածքներում՝ մոտ 700մ շառավղով, բացակայում են գումարային ազդեցություն առաջացնող գործունեություններ:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտերի մակերևույթները ջրելու միջոցով, նրանց վրա փոշին ճնշելու նպատակով: Ջուրը բերվելու է KO-002 մակնիշի ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է B1-BԱ-1 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն, ինչպես նաև սոցիալական ազդեցությանն ուղղված միջոցառումներ:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.



- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Արամուս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ, հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված (<< կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման համաձայն) շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԼԵՎՈՒՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Զ. Զոունայան